

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 7/12

Քաղ. Երեւան

28 փետրվարի 2012թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա. Ի.Ղարիբջանյան (քարտուղար) Ա. Հ. Աբգարյան իր 2012թ. փետրվարի 28-ի նիստում (արձանագրություն N 2.5) քննարկեց «Եղվարդի գինու-կոնյակի գործարան» ընկերության կողմից 2012թ. հունվարի 20-ին ներկայացված «АРМЕНИЯ» (հայտի համարը N 20101543) համակցված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը , «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» մասին կարգի 90-րդ կետի 2-րդ ենթակետը և 94-րդ կետի 8-րդ ենթակետը, համաձայն որի որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը վերարտադրում կամ պարունակում է պետությունների պաշտոնական անվանումներ կամ դրանց կրճատ ձևեր: Ապրանքային նշանը պարունակում է «АРМЕНИЯ» անվանումը, որը Հայաստանի Հանրապետության պաշտոնական անվանումն է:

Բողոքում նշված է, որ 2011թ. մայիսի 26-ին «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում փոփոխություններ և լրացումներ են կատարվել, ըստ որի Պետությունների պաշտոնական անվանումները, դրանց կրճատ ձևերը կամ շփոթելու աստիճան նման նիշերը կարող են ներառվել ապրանքային նշանի մեջ որպես չպահպանվող տարրեր, եթե դրանք գերիշխող մաս չեն զբաղեցնում, և այդ ապրանքային նշանի օգտագործումն անհարիր չէ պետության հեղինակության համար և չի նսեմացնի այն:

Հաշվի առնելով այս լրացումը և այն հանգամանքը, որ «Եղվարդի գինու-կոնյակի գործարան» ԲԲԸ հայտարկված նշանը, որը գրանցված է եղել ապրանքային նշանների ՀՀ

պետական Գրանցամատյանում 2001 թվականից, որի գրանցման գործողությունը թյուրիմացաբար չի երկարաձգվել, և օգտագործվում է դեռևս 1999 թվականից, բողոքարկողը գտնում է, որ փորձաքննության որոշումը ներկայումս չի հիմնավորվում գործող Օրենքով՝ դրա փոփոխության արդյունքում: Հայտարկված համակցված ապրանքային նշանը պարունակում է «АРМЕИЯ» անվանումը, որը Հայաստանի Հանրապետության կրճատ անվանումն է, չի զբաղեցնում նշանի գերիշխող մասը, և դրա օգտագործումը բարձրորակ հայկական կոնյակի վրա անհարիր չէ պետության հեղինակությանը, և ոչ մի կերպ չի կարող նսեմացնել այն:

Բողոքարկողը խնդրում է «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն վերանայել ապրանքային նշանների բաժնի մերժման մասին որոշումը, ուժը կորցրած ճանաչել այն և գրանցել հայտարկված ապրանքային նշանը, առանց «АРМЕИЯ» բառին ինքնուրույն պահպանություն տրամադրելու:

Կոլեգիայի անդամը բողոքը ներկայացնելիս նշեց, որ 2012թ. հունվարի 20-ին «Եղվարդի գինու-կոնյակի գործարան» ընկերության կողմից ներկայացվել է «АРМЕИЯ» (հայտի համարը N 20101543) համակցված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոք: Համառոտ ներկայացվեց մերժման հիմքը:

Նշվեց, որ ապրանքային նշանը օգտագործվում է դեռևս 1999թ. և կոլեգիայի անդամի կողմից առաջարկվեց ապրանքային նշանը գրանցել՝ դեսկլամացիա անելով «АРМЕИЯ» բառը:

Բողոքարկման խորհուրդը, ընդհանուր քննարկման արդյունքում, եկավ այն եզրակացության, որ բողոքարկողի փաստարները համոզիչ են կարելի է գրանցել «АРМЕИЯ» (հայտի համարը N 20101543) ապրանքային նշանը՝ դեսկլամացիա անելով «АРМЕИЯ» բառը:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Եղվարդի գինու-կոնյակի գործարան» ընկերության բողոքը բավարարել մասնակիորեն, չեղյալ ճանաչել հայտարկված ապրանքային նշանի կրկնական փորձաքննության որոշումը և գրանցել «АРМЕИЯ» համակցված ապրանքային նշանը ԱԾՄԴ 33-րդ դասի «հայկական կոնյակ» ապրանքի համար՝ դիսկլամացիա անելով АРМЕИЯ բառը:

Բողոքարկման խորհրդի
նախագահ

Ա. Ազիզյան